Ավետիք Իսահակյան

Ալեքսանդր Ծատուրյանին, 1910թ . , ապրիլի 20, Ղազարապատ

Սիրելի ընկեր, Աղեքսանդր Ծատուրյան.
Սրտի խորին ուրախությամբ իմացա, որ տոնվելու է Ձեր 25-ամյա գրական հոբելյանը: Ես ուրախ եմ ոչ թե այն պատճառով, որ գիտակից հասարակությունը գալիս է գնահատելու և երախտահատույց լինելու, այլ այն պատճառով, որ Դուք 25 տարվա մարտիրոսական, դժվարին ճանապարհ եք կըտրել, անցել, և Ձեր անունի վրա ստվեր չկա, և պայծառ հա¬յացքով կարող եք ու դեռ ուժ ունիք առաջ քայլելու:
Ո՛չ ոք չի կարող այնպես խորագին զգալ այն հայտնի և անհայտ տանջանքները, որ Դուք ապրել եք 25 տարվա մեջ, բայց եթե միայն Ձեր գրչի ընկերները. հայկական վայրենի հասարակության մեջ այդ մի պրոմեթեական դարավոր տառապանք է, մի իսկական հերոսություն, որ ընկած է Ձեր և Ձեր ընկերների զգայուն ուսերին: Եվ այսօր ես, Ձեր կրտսեր եղբայրը գալիս եմ գլուխ խոնարհելու Ձեր առաջ, և ոչ միայն նրա առաջ, ինչ որ Դուք արել եք և ստեղծել, այլ այն մեծության առաջ, որ չարտահայտվեց և չասվեց, որը կար Ձեր հոգում, և որը խեղդվեց մեր անհրապույր միջավայրում:
Իմ ավագ ընկե՛ր, իմ սիրելի ընկե՛ր, և Դուք մի՛ հավատացեք այն ծափերին և ճառերին, որոնք վաղը որոտալու են ի պատիվ Ձեր. իմ խոքփն համոզմունքով հայ գրական խոսքը միշտ արհամարհված է և հայ ստեղծագործ միտքը միշտ ծաղրված հենց այդ մարդկանց կողմից, որոնք վաղը կուշտ որկորով պիտի շրջապատեն Ձեզ, մյուս օրը Ձեզ նորից արհամարհելու և ծաղրելու համար:
Դուք մի՛ հավատացեք մեր անգրագետ ինտելիգենցիային, մեր այլասերված

ուսանողության և մեր գիշակեր բուրժուազիային. նրանք, որոնք օվսաննա են տալու Ձեզ, հավատացնում եմ Ձեզ, որ չեն էլ կարդացել Ձեր ստեղծագործությունները:
Դուք հավատացեք Ձեր ապագային՝ ոչ այն շաբլոնական ապագային, որ իբրև թե պսակելու է Ձեզ, այլ մայրենի խոսքի ապագային, այն մեծ գաղափարին, թե ամեն ինչ կանցնի, կմնա Ոգին միայն ստեղծագործության, կմնա մայրենի խոսքը միայն, որի մեջ կապրի Ձեր շունչը, Ձեր ստեղծագործական վեհ տառապանքը, Ձեր իսկական սերը: Որիշ ոչինչ չունիմ Ձեզ ասելու և շնորհավորելու. ցանկանում եմ Ձեզ ուժ և կորով և վեհանձնություն առաջ գնալու՝բարձր պահելով հայ գրողի պատիվը, որը իրապես հայ ժողովրդի պատիվն է:

Ընդունեցեք ջերմ և սրտանց համբույրներս, իմ թանկագին ընկե՛ր.
Մնամ Ձեր կրտսեր եղբայր՝
Ավետիք Իսահակյան